



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀՈԳԵՒՈՐ ԶԱՐԹՕՆՔԻ ԼՍԱՐԱՆ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Ազգային Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութան բաժանմունքին կազմակերպած հոգևոր զարթոնքի լսարաններու շարքին, այս ամսուան դասախօսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, Յունիս 11-ին, կ.ե. ժամը 5-ին, Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ Մարմինին:

Չեկուցաբերն էր Տիկին Սոնա Յակոբեան, որ ներկայացուց Rick Warren-ի գիրքը, նիւթ ունենալով Մարդկային կեանքը, իմաստը, արժէքը եւ նպատակը:

Յայտնենք որ, Առաջնորդ Սրբազան Հայրը նոյն օրը հանդիպում ունեցաւ մեր երիտասարդութեան հետ եւ փոխանցեց իր օրհնութիւնները, գնահատանքն ու քաջալերանքը:

PRELACY SPIRITUAL RELIGIOUS EDUCATIONAL LECTURE SERIES IN PASADENA

The Prelacy Youth Directorate Council, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has organized a series of monthly educational lectures.

The lecture for the month of June took place on Sunday, June 11, at 5:00 p.m. at St. Sarkis Church in Pasadena.

The lecturer was Mrs. Sona Hagopian who presented Rick Warren's book "The Purpose Driven Life".

On this occasion, the Prelate met with the youth and conveyed his blessings and encouragement.

ԱՄԱՎԵՐՋԻ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Ուսումնական 2005-2006 տարեշրջանը եւս այս օրերուն կ'անցնի պատմութեան ու Ազգային վարժարաններն ու Կիրակնօրեայ դպրոցները իրենց աշխատանքային տարին կը փակեն ամավերջի հանդեսներով, որոնք կը վայելեն Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը:

Առաջնորդ Սրբազանը անձամբ կամ ներկայացուցիչներու միջոցով ներկայ կ'ըլլայ այս հանդեսներուն, իր օրհնութիւնը տալով մեր աշակերտութեան ու դաստիարակներուն: Աւելին, Ազգային երկրորդական վարժարաններու աշակերտները այս տարի իբրեւ նուէր կը ստանան Ճափոնի մօտ Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան առաջին ներկայացուցիչ Տայանա Աբգարի ծանօթ գիրքէն օրինակներ: Այս նուիրատուութիւնը կը հովանաւորեն Ազգ. Առաջնորդարանի բարերարներէն Տէր եւ Տիկին Ճիւլիան Մովսէսեան:

Շաբաթ, Յունիս 17-ին, կ.ե. ժամը 5:30-ին, տեղի պիտի ունենայ Ռիչըրտ Թիւֆէնքեան Ազգ. Մանկամտօր Մանկապարտեզի հանդէսը, Լա Քանիատայի Lanterman սրահին մէջ: Իբրեւ Առաջնորդ Սրբազան Հօր ներկայացուցիչը՝ Գերպ. Տ. Միւռնոս Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ հանդէսին: Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տիկին Սօսի Յովսէփեան եւս ներկայ պիտի ըլլայ հանդէսին եւ պիտի փոխանցէ հնամակալ Մարմինի խօսքը:

Նոյն օրը, կ.ե. ժամը 5-ին, տեղի պիտի ունենայ Մոնթեպելլոյի Մետրոպէան Ազգ. վարժարանի 8-րդ եւ 12-րդ կարգերու հանդէսերը: Իբրեւ Առաջնորդ Սրբազան Հօր ներկայացուցիչը՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ հանդէսին: Ազգ. Վարչութեան անդամ եւ Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տիար Միտր Տէր Յովաննէսեան եւս ներկայ պիտի ըլլայ հանդէսին:

Սան Ֆրանսիսքոյի Գռուգեան Չաքարեան Վասպուրական Ազգ. վարժարանի 8-րդ կարգի հանդէսը տեղի ունեցաւ Ուրբաթ, Յունիս 16-ին, կ.ե. ժամը 4-ին, «Խաչատուրեան» Հայ Կեդրոնին մէջ: Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչն էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղծոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Աւետիս Քիւյ. Թորոսեան:

Չորեքշաբթի, Յունիս 21-ին, երեկոյեան ժամը 6-ին, տեղի պիտի ունենայ Օրէնճ Զառնթիի Արի Կիրակոս Միւնասեան Ազգ. վարժարանի հանդէսը, Յովաննէան համալիրի «Ղուկասեան» սրահին մէջ: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ հանդէսին: Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տիար Աւօ Զէշիշեան եւս ներկայ պիտի ըլլայ հանդէսին:

Շաբաթ, Յունիս 24-ին, կ.ա. ժամը 11-ին տեղի պիտի ունենայ Հովիվուտի Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. վարժարանի 5-րդ կարգի հանդէսը: Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան Հօր, ներկայ պիտի ըլլայ հանդէսին:

Նոյն օրը կ.ե. ժամը 1-ին, տեղի պիտի ունենայ վարժարանի 8-րդ կարգի շրջանաւարտներու հանդէսը, իսկ 12-րդ կարգի շրջանաւարտներու հանդէսը տեղի պիտի ունենայ Կիրակի, 25 Յունիսի կ.ե. ժամը 2-ին: Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ հանդէսին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի փոխ ատենապետուհի Տոքթ. Արմինէ Յակոբեան նմանապէս ներկայ պիտի ըլլայ 12-րդ կարգի հանդէսին եւ պիտի փոխանցէ հնամակալ Մարմինի խօսքը:

Շաբաթ, Յունիս 24-ին, կ.ե. ժամը 3-ին տեղի պիտի ունենայ Ֆերահեան Ազգ. վարժարանի 5-րդ կարգի հանդէսը: Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին տեղի պիտի ունենայ 8-րդ կարգի հանդէսը: Իսկ 12-րդ կարգի շրջանաւարտներու հանդէսը, տեղի պիտի ունենայ Կիրակի, 25 Յունիսի կ.ե. ժամը 4-ին: Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ հանդէսին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները: Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի

ներկայացուցիչ Իրաւ. Զրիս Զեօսեան եւս ներկայ պիտի ըլլայ հանդէսին եւ պիտի փոխանցէ Խնամակալ Մարմինի խօսքը:

Նոյն օրը, Կիրակի, Յունիս 25-ին, կ.ե. ժամը 3-ին, տեղի պիտի ունենայ Փասատիւնայի Լեւոն եւ Յասմիկ Թաւլեան Ազգ. Մանկամտօր Մանկապարտեզի հանդէսը, Փասատիւնայի Հայ Կեդրոնին մէջ: Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տոքթ. Իտա Գարայեան ներկայ պիտի ըլլայ հանդէսին եւ պիտի փոխանցէ Խնամակալ Մարմինի խօսքը:

Կիրակի, Յունիս 25-ին, կ.ե. ժամը 4-ին, տեղի պիտի ունենայ Նաեւ Վահան եւ Անուշ Շամլեան Ազգ. վարժարանի 6-րդ կարգի վկայականաց բաշխման հանդէսը, Լա Քանիատայի Lanterman սրահին մէջ: Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլայ հանդէսին, իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան հօր:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6:30-ին, նոյն սրահին մէջ տեղի պիտի ունենայ վարժարանի 8-րդ կարգի շրջանաւարտներուն հանդէսը: Առաջնորդ Սրբազան հայրը ներկայ պիտի ըլլայ հանդէսին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

Ազգ. Վարչութեան անդամ եւ Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչ Տիար Վահէ Յովակիմեան եւս ներկայ պիտի ըլլայ հանդէսին:

Ամավերջի հանդէսներու ծիրին մէջ յիշենք Նաեւ, որ Չորեքշաբթի, Յունիս 14-ի երեկոյեան ժամը 7-ին, Փասատիւնայի Հայ Կեդրոնին մէջ, բարձր հովանաւորութեամբ ու ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան հօր, տեղի ունեցաւ Փասատիւնայի Պետական Երկրորդական վարժարաններու շրջանաւարտ հայ ուսանողներու գնահատանքի հանդիսութիւնը:

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց եւ նորանոր յաջողութեան մաղթանքներ փոխանցեց բոլորին: Առաջնորդ Սրբազան հօր կողքին ներկայ էր Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապոշեան: Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ իւրաքանչիւր շրջանաւարտի իբրեւ նուէր տրուեցան գրքոյկներ:

Կիրակնօրեայ դպրոցներու հանդէսները եւս տեղի կ'ունենան Ազգ. Վարժարաններու հանդէսներուն զուգահեռաբար: Կիրակի, Յունիս 25-ին, կ.ե. ժամը 4-ին, եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Կլէնտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի հանդէսն ու վկայականներու բաշխումը: Իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչը, Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ հանդէսին եւ շրջանաւարտներուն պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

GRADUATION CEREMONIES OF PRELACY SCHOOLS

As the 2005-2006 school year draws to a close, Prelacy schools and Sunday schools are preparing for their commencement ceremonies, all of which are held under the auspices of the Prelate.

The Prelate, or a representative, will attend these ceremonies to offer his blessings to the students. This year, on behalf of the Prelate, Prelacy Executive Council, and PR Committee, High School graduates will receive copies of the book by

Diana Aparcar, Honorary Consul General to the Republic of Armenia during the first Republic, as an appreciation on their graduation. The books have been sponsored by Mr. & Mrs Julian Movsessian.

On Saturday June 17, at 5:30 pm., Tufenkian Pre-school's graduation will take place at Lanterman Auditorium in La Canada. Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate. Mrs. Sossi Hovsepian will speak on behalf of the Board of Regents.

On the same day, at 5:00 p.m., Mesrobian School of Montebello will have its 8th and 12th grade graduations. Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate along with Mr. Meher Der Ohanessian, Executive Council member and Board of Regents representative.

The 6th grade graduation of KZV School in San Francisco took place on Friday, June 16, at 4:00 p.m., in the "Khatchadourian" Armenian Center. Rev. Fr. Avedis Torossian of St. Gregory Church represented the Prelate.

On Wednesday June 21, at 6:00 p.m., A.G. Minassian School of Orange County will hold its graduation at the "Gugasian Hall" of the Hovnanian Complex. The Prelate will be in attendance as well as Board of Regents representative Mr. Avo Keshishian will be in attendance.

The Pilibos School's 5th grade graduation will take place on Saturday June 24, at 11:00 a.m. Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate. The 8th grade graduation will take place at 1:00 p.m. of the same day, and the 12th grade on Sunday June 25, at 2:00 p.m. The Prelate will personally deliver his blessings and congratulations. Board of Regents Vice-Chair Dr. Armine Hacopian will also be in attendance to speak on behalf of the Board.

Ferrahian School's 5th grade graduation will take place on Saturday June 24, at 3:00 p.m. At 6:00 p.m. of the same day is the 8th grade graduation. The 12th grade graduation will take place on Sunday June 25, at 4:00 p.m. The Prelate will deliver his blessings and congratulatory remarks to the students. Board of Regents member Mr. Chris Keosian will speak on behalf of the Board.

Also on June 25, at 3:00 p.m. is Tavlian Pre-school's graduation at the Pasadena Armenian Center. Dr. Ida Karayan, member of the Board of Regents, will represent the Board.

On the same day, at 4:00 p.m., is Chamlian School's 6th grade graduation at Lanterman Auditorium in La Canada. Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate.

At 6:30 p.m. of the same day, Chamlian's 8th grade graduation will take place. The Prelate will be present to convey his blessings and remarks. Executive Council member and Board of Regents representative Mr. Vahe Hovaguimian will also be in attendance.

On the evening of Wednesday June 14, a reception took place under the auspices of the Prelate at the Pasadena Armenian Center to honor Armenian graduates of the Pasadena School District. The Prelate, accompanied by Rev. Khoren Baboshian of St. Sarkis Church, congratulated the graduates and wished them success.

On Sunday June 25, at 4:00 p.m., the Sunday School of St. Mary's Church will have its graduation ceremony at the church's "Armenak Der Bedrossian" Hall. Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate and convey his blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՔԱԶԱԼԵՐԷ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Հայկական նորակազմ «Էլեմընթ» խումբը իր առաջին պաշտօնական երգահանդեսը պիտի տայ Ուրբաթ, Յունիս 16-ի երեկոյեան, Յոլիվուտի Ford Amphitheater-ին մէջ:

Առաջնորդ Սրբազան հայրը, գնահատելով մեր նոր սերունդի երիտասարդ արուեստագետները, ներկայ պիտի ըլլայ երգահանդեսին, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանին:

Նշենք որ, խումբին անդամներուն շարքին են Ազգ. Ֆերահեան վարժարանի նախկին աշակերտներ:

THE PRELATE ENCOURAGES YOUNG ARTISTS

The Armenian band "Element" will have its first official concert on the evening of Friday, June 16 at the John Anson Ford Amphitheatre.

The Prelate, accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, will attend the concert to encourage the new generation of Armenian artists.

Let us note that several members of the band are graduates of Ferrahian Armenian High School.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ Կ'ԸԼԼԱՅ Հ.Բ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Շաբաթ, Յունիս 17-ին, երեկոյեան, Universal Hilton պանդոկի սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան 100-ամեակին նուիրուած պաշտօնական եւ հանդիսաւոր ճաշկերոյթը:

Ընդառաջելով միութեան հրաւերին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ այս հանդիսութեան:

AGBU CENTENNIAL BANQUET

On the evening of Saturday, June 17, AGBU will celebrate its centennial with a banquet at the Universal Hilton.

Upon the invitation of AGBU, the Prelate will be in attendance to participate in the festivities.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ
ՔՈՐՈՆԱՅԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Մեր Թեմի ծխական նորակազմ շրջաններուն մէջ, եկեղեցանուէր ու ժողովրդանուէր աշխատանքները մեծ թափով կը շարունակուին:

Ռիվըրսայտի Քորոնա քաղաքին մէջ, ուր աւելի քան տարի մը առաջ պաշտօնապէս հիմը դրուեցաւ Քորոնայի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ ծխական համայնքին, ամսական դրութեամբ պատարագ կը մատուցուի:

Կիրակի, Յունիս 18-ին, կեսօրէ ետք ժամը 2-ին տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ, ղրպտիներու Ս. Էնթընի եւ Ս. Ապալուպ եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ օրուան պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Առաջնորդ Սրբազան հօր պիտի սպասարկէ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

**HOLY MASS AT THE ARMENIAN APOSTOLIC CHURCH
OF CORONA, RIVERSIDE COUNTY**

The newly establishes parish community of Corona, Riverside County, will celebrate its first anniversary with a Holy High Mass. On Sunday, June 18, at 2:00 p.m., the Prelate will conduct Holy Mass and deliver his message at the St. Anthony and St. Abanoub Coptic Orthodox Church. The Prelate will be assisted at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian.

**ԴԱՒԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ**

Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան հայերէն ծրագրի շրջանաւարտներու հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Կիրակի, Յունիս 25-ին, կ.ե. ժամը 4-ին, Pacific Community Center-ի մէջ, Կլէնտէյլ:

Իբրեւ Առաջնորդ Սրբազան հօր ներկայացուցիչը, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ հանդեսին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

**DAVIDIAN-MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION GRADUATION
CEREMONY**

On Sunday, June 25, at 4:00 p.m., a ceremony for graduates of the Davidian-Mariamian Educational Foundation's Armenian program will take place at Pacific Community Center in Glendale.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate, where he will also deliver the Prelate's blessings and congratulatory remarks.